# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №2

## 06.05.2026թ. կնքված N ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-26/8-1 պայմանագրի

ք. Երևան «11» հունիսի 2026թ.

«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամը, ի դեմս տնօրեն Գ. Քառյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Թամամյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող», մյուս կողմից, հիմք ընդունելով Պայմանագրի 8.5 և 8.8 կետերը և այն, որ վաճառողի կողմից ապրանքի մատակարարման ժամկետի երկարացման վերաբերյալ համապատասխան առաջարկության ներկայացման պահին Պատվիրատուի մոտ չի վերացել պայմանագրով նախատեսված գնման առարկայի հանդեպ պահանջը, կողմերը որոշեցին կնքել սույն համաձայնագիրը.

### 1. Համաձայնագրի առարկան

Պայմանագրի Հավելված N2-ով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետը սյունակում նշված «Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 60 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 90 օրացուցային օրվա ընթացքում» բառերով:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը համարվում է 06.05.2026թ.-ին կնքված № ԱԱԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-26/8-1 Գնման պայմանագրի անբաժանելի մաս:

2.2 Սույն համաձայնագրում չնշված կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

2.4 Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Գնորդ | Վաճառող |
|---|---|
| «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամ | «ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ |
| ք. Երևան, Ալիխանյան եղբայրների փող., 2 շենք | ՀՀ, ք.Երևան, 0065, Ջամբուլի փ. 33 |
| ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ | Ամերիաբանկ ՓԲԸ |
| Հ/Հ 1570013071880800 | Հ/Հ 1570059892050100 |
| ՀՎՀՀ 01202364 | ՀՎՀՀ 01297088 |
| տնօրեն------------------------Գ. Քառյան | տնօրեն------------------------Գ. Թամամյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |